

1178



1930

НАРКОМПРОС АССР

ИНСТИТУТ ПОВЫШЕНИЯ КВАЛФИКАЦИИ ПЕДАГОГОВ
ՈՒՍՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՎՈՐԱԿՎՈՐՈՒՄԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԽՆՏՔՑՈՒՄ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՄԱՆԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 5

ՍՏԱՏԻՍՏԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴԸ ՄԱՆԿԱԲԱ- ՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մանկան որգանիզմի ու ինքնությունը ճշգրիտ կերպով ճանաչելու համար՝ մանկաբանությունը զործադրում է ֆիզիկական և հոգեկան հատկությունների չափումն, վերականգնելով նրանց քանակական փոփոխության որևէքները:

Ֆիզիկական հատկությունների չափումով զբաղվում է անտրոպոմետրիան, (антропометрия) հոգեկան հատկությունների չափումով՝ մենտիմետրիան (ментиметрия): Առանց ստատիստիկական տարրական պրիզմների յուրացման, առանց կորրելիացիաների և ստանդարտների գիտության՝ այժմյան մանկաբանության ուսումնասիրությունն անհնար և զանում: Հենց այդ հասկացողությունների և մեթոդների հետ ծանոթացնելն ել հանդիսանում ե սույն առաջադրության նպատակը:

Դիտողություն.—Այն կուրսանտները, վորոնք գեն ծանոթ չեն քառակուսի արմատ հանելու մատեմատիկական գործողության հետ, կարող են սույն առաջադրությունն առայժմ թողնել, այն պայմանով, վոր ձեռք բերեն ալգեբրայից այդ գործողության համար պետք յեղող գիտելիքները:

Ստանդարտներ (стандарты)

Մանկաբանությունը ձգում է առաջին—ուսումնասիրել գործառնության՝ մասսան՝ իր ամբողջության մեջ և յերկրորդ—ճանապարհուաց անել՝ հասկանալու համար, յուրաքանչյուր առանձին

յերեխայի զարգացումը։ Բայց առանձին յերեխայի զարգացումը կարելի յե հասկանալ միայն մանկական մասսայի մեջ նրա զրաված համապատասխան տեղի միջոցով։ Այդ պատճառով՝ մանկաբանության առաջին խնդիրը հանդիսանում է տվյալ սոցիալական միջավայրի վորոշ հասակի ու սեռի, մասսայական տիպիկ յերեխային վորոշելն ու ճանաչելը։ Մենք պետք ե իմանանք տվյալ միջավայրի տիպիկ մասսայական յերեխայի հասակը, կշիռը, ֆիզիկական ուժը, մտավոր զարգացումը և այլն։ Այդպիսի ճանաչողություն կարելի յե ձեռք բերել մանկաբանության մեջ ստահակական մերությունը կիրառելով։

Ստատիստիկայի մեջ վորպես ընդհանուր չափ, ընդունվում է կամ 1) բվաբանական միջին մեծությունը կամ 2) Մեղիսանա (медиана) կամ 3) Մոդուսը (մոդուս)։

Թվաբանական միջին մեծությունը (M.) կստացվի, յեթե առանձին չափումներից ստացված արդյունքները գումարենք և նրանց գումարը բաժանենք գումարելիների թվի վրա։

Մեղիսանա—այսինքն միջին կամ կենտրոնական մեծությունը (Me.) կստացվի, յեթե չափումների արդյունքները դասավորենք կամ աճող կամ նվազող կարգով և վերցնենք այն մեծությունը, վորը կրօնի միջին տեղը, այսինքն այդ թվի աջ ու ձախ կողմերում կդանվեն հավասար թվով մեծություններ. (որինակ՝ չափումի յենթարկված 55 յերեխայից 28-րդը վերցրվում և վորպես մեղիսանա, վորովհետեւ նրա մի կողմից դասավորված են 27 աճող մեծություններ, իսկ մյուս կողմը՝ 27 նվազող մեծություններ)։

Մոդուսը (մոդուս) այն մեծությունն է, վոր տվյալ խմբավորման մեջ ամենից շատ ե կրկնվում։

Այդպիսով վորպես տիպիկ՝ մասսայական յերեխա ընդունվում է կամ «միջին» յերեխան, կամ «մեղիսան» յերեխան (միջին յերեխան) կամ «մոդուս» (մոդուլինայի) յերեխան։

Բայց մանկական մասսան ճանաչելու համար բավական չեն վերոհիշյալ ընդհանուր չափանիշները, անհրաժեշտ է նույնականացնել թե ինչքան մեծ ե այդ նորմայից այս կամ այն կողմը յեղող թեքումը («ստանդարտը»): Նույնպես ել, յեթե ուզում ենք ճիշտ վորոշել առանձին յերեխայի ֆիզիկական կամ հոգեկան զարգացման աստիճանը, ապա բավական չե չափել միայն նրա թեքումը յեղած նորմայից, այլ անհրաժեշտ է նաև կարողանալ գնահատել այդ անհատական թեքումը։ Այդ բանի համար անհրաժեշտ է ունենալ մի ուրիշ չափ և, այսպես կոչված, մասսայա-

կան թեմնման թեքման համար ոգտվում են 1) միջն թեքումից կամ 2) նորմալ թեմնմից։ Միջին թեքումը գտնում են հետեւյալ ձևով.՝ Գոնկելով ընդհանուր չափը (միջին թվաբանականը, մեղիսանան կամ մոդուլը), հանրահաշվորեն հանում ենք նրանից յուրաքանչյուր առանձին թիվը և ստանում ենք միշտը թեքումներ գ¹ գ² գ³ գ⁴ և այլն (մի քանիսը պլյուս, մյուսները մինուս նշանավով): Պլյուս և մինուս նշանները դեն ձգելով գումարում անք բոլոր թվերը, վորոնք արտահայտում ենք գումարելիների թվի վրա։ Ազելի ճիշտ չափանիշը՝ դա նորմալ (կամ ինչպես ասում են, միջին կիպրաբանային թեքումն է): Այդ ստանակու համար պետք է, վերաբեր հիշած ձևով նախ գտնել անհատական թեքումը գ¹ գ² գ³ գ⁴ և այլն, իսկ հետո յուրաքանչյուր անհատական թեքումը բարձրացնել քառակուսի աստիճանի, ապա վերցնել բոլոր քառակուսիների գումարը, բաժանել գեսքերի թվի վրա և վերջապես ստացված թվից հանել քառակուսի արմատը։ Նորմալ թեքումը նշանակվում է հունական ծ (СИГМА) տառով։ Այդպիսս, ուրեմն, նորմալ թեքման ֆորմուլան հետեւյան է.

$$-\delta = \sqrt{d_1^2 + d_2^2 + d_3^2 + d_4^2 + \dots d_n^2}$$

Այն յերեխան, վոր ընդհանուր չափից (M, Me, Mo) թեքվում է մեկ սիգմայի սահմաններում, համարվում է նորմալ. յեթե ընդհանուր չափից թեքվում է չորս սիգմայի սահմաններում ($\pm 4\delta$) կամ ավելի, ապա այդ յերեխան ճանաչվում է վորպես անորմալ, այսինքն նա իր զարգացողությամբ չի պատկանում տվյալ մանկական մասսային։

Յեթե թեքման մեծությունը գանվում է $+ \delta$ և $+ 4\delta$ մեջ, ապա յերեխան համարվում է նորմալից բարձր (սուրանորմալինային), իսկ յեթե զանվում է -1δ և -4δ մեջ, ապա համարվում է նորմայից ցած (սబնորմալինային):

Միջին տիպը, տվյալ մանկական մասսայի համար, ավելի հաճախ է կրկն լում և ընկնում է $(M - \frac{1}{2}\delta)$ և $(M + \frac{1}{2}\delta)$ միջին քառակուսային թեքման կեսի պլյուսի և մինուսի սահմաններում և սովորաբար նշանակվում է Ռ տառով։

Յերեխաների այն խումբը, վոր ընդհանուր չափից թեքվում են $\frac{1}{2}$ սիգմայից ավելի, բայց մի սիգմայից վոչ բարձր, նշա-

— 4 —

Նակվում են +A և -A (նայած թե թեքումը նորմայից դրական թե բացասական կողմն եւ):

Այս յերեխաները, վորոնք ընդհանուր նորմայից թեքված են մեկ սիգմայից ավելի բայց յերկու սիգմայից վոչ ավել, նշանակվում են +B և -B: Յերկուսից մինչև յերեք սիգմա թեքման դեպքերում, նշանակվում են +C և -C: յերեքից մինչև չորս սիգմայի դեպքում՝ +D և -D:

Ընդհանուր չափը (M, Me, Mo) և միջին քառակուսային թեքումը հանդիսանում են այն ստանդարտները, վորոնց ոգնությամբ մենք կարող ենք չափել առանձին յերեխայի զարգացման աստիճանը և նորմայից ունեցած թեքման մեծությունը:

Որինակ.—ուսւ պրոլետարիատի յերեխայի համար (Մուկ-վայի 7 ամյա դպրոցի) հաստատված և հետեյալ ստանդարտը.— հասակը—115 սանտմ. քաշը՝ 21,1 կիլոգրմ. կրծքի շրջապատը— 58,7 սանտմ.: Նրա հասակի սիգման կազմում է 4,56 սանտմ., քաշի սիգման՝ 2,22 կիլոգրմ. և կրծքի շրջապատի սիգման՝ 2,96 սանտմ.:

Ցեֆե Մոսկվա քաղաքի պրոլետարիատի վորոն յերեխա ունի 118,6 սանտմ. հասակ, 19,6 կիլոգր, քաշ, և 58,1 սանտմ. կրծքի շրջապատ, ապա նրա հասակը ստանդարտից թեքվում և + 3,6 ս. քաշը՝ 1,5 կիլոգր. և կրծքի շրջապատը՝ 0,6 ս.: Այդ շեղումները համապատասխան սիգմաներով գնահատելով, ստանում ենք հասակի թեքման 3,6 : 4,56, այսինքն 0,8 սիգմա, քաշի թեքում՝ 1,5 : 2,12 = — 0,7 սիգմայի, և կրծքի շրջապատի շեղում՝ 0,6 : 2,96 = — 0,2 սիգմայի: Հետևաբար ուսումնասիրության յենթակա յերեխան իր հասակով պատկանում է + A խմբին, քաշով՝ A խմբին, իսկ կրծքի շրջապատով՝ Γ խմբին:

Ստանդարտների միջոցով առանձին յերեխաների համապատասխան նշանները չափելով, մենք կարող ենք տալ նրա «անհատական պրօֆիլը», վորը ցույց կտա նրա փիզիկական կամ մըտավոր զարգացման վարքագիծը, վոր ցույց կտա, թե նրա վայր հատկություններն են ուժեղ կերպով զարգացած և վորոնք թույլ նույնպիս և ցույց կտա այն, թե այդ յերեխան տվյալ մանկական մասսայի մեջ, վորոշ նշանների տեսակետից, ինչ տեղ և բռնում:

Սիգմայի մեծությունը ցույց ե տալիս տվյալ մասսայի դիքերեցիացյայի ավելի կամ պակաս աստիճանը: Հաստատված և, վոր հասակի աճման հետ մեծանում է նաև սիգման, դա նշանա-

կում է, վոր վորքան գեռատի յե մանկական մասսան, այնքան նա միատարր է, վորքան նա մեծ է, նրա մեջ նորմայի ներքին տարբերություններն ավելի յեն և վերջիններս ավելի նշանակալից են: Ուսումնասիրողներից մի քանիսը գտնում են նաև, վոր սիգմայի մեծությունը տղաների մոտ ավելի բարձր է, քան աղջիկների մոտ (հետեւաբար տղաների մոտ միջին ընդունակություններից գեղի դրական կամ բացասական կողմը յեղած թեքումներն ավելի հաճախակի յեն և ավելի նշանակալից):

-3σ	-2σ	-σ	-½σ	+½σ	+σ	+2σ	+3σ
-C	-B	-A	T	+A	+B	+C	

Նկ. 6. Յերեխայի անհատական պրոֆիլը.

Ստանդարտները վերականգնելու համար պետք է հասակակից յերեխաներ վերցնել: Անհրաժեշտ է հիշել նաև, վոր հասակակից յերեխաները մի տիպի չեն պատկանում, այլ մի քանի տիպերի (տղաներ և աղջիկներ), քաղաքի և գյուղի յերեխաները, տարրեր յերկրների և աղջությունների յերեխաներ, հասարակության տարրեր գասակարգերի յերեխաներ, աշխատանքի տարրեր բնոնիածքով (հարցյակ) և տարրեր մնունդ ստացող յերեխաներ և այլն): Յերեխայի հատկությունների ճիշտ ուսումնասիրության համար, հարկավոր են տիպիկ սանդարձներ այն խմբի, վորին պատկանում և տվյալ յերեխան, յեվ վոչ թե համամարդկային, ապադասկարգային նորմա: Մասնավորապես Մոսկվայի, Ռուսայնայի և Ադրբեյջանի յերեխաների ստանդարտները չեն զուգադիպում: Դժբախտաբար թրքական յերեխաների համար ստանդարտներ մշտկերու աշխատանքները նոր են սկսված: Շատ նշանների համար ստանդարտներ չկան նաև ուսւ յերեխաների համար և ստիպված ենք հաճախ ոգտվող Արեմոյան Յերվոպայի և Ամերիկայի ստանդարտներից, վորոնք վերաբերում են տարրեր պայմաններում մեծացող մանկական մասսային, վոր ուժեղ կերպով տարբերվում ե մերից:


Վերջապես պետք է հաշվի առնել նաև ստանդարտների փոփոխականությունը, այդպէս՝ նախապատերազմյանի և մինչ հեղափոխությունը, հեղափոխության առաջին տարիների և ներկայումս յեղած ստանդարտների միջև։ Պատերազմի տարիները, — սովոր, տնտեսական քայլայումը և այն չեյին կարող չանդրագառակ մանկութան մասսայի վրա։ Տարրեր մանկական մասսաների, տարրեր անդերի ու ժամանակների ստանդարտները միմյանց հետ համեմատելով, մենք կարող ենք խոսել յերեխաների դարձացման վրա տարրեր պայմանների թողած ազգեցության մասին։

Մանկաբանության ուսումնասիրության կորրելացիաներ թյան առարկա հանդիսացող կենսաբանական և հոգեբանական յերեսույթների բարդության ու նրանց մեջ գործող բազմապիսի գործոնների (ֆակտօր) հետեանքով՝ շատ գեղղերում չի հաջողվում խիստ մատեմատիկական ձևալորումով յերեան բերել բնության ճիշտ որենքները այնպես, ինչպես այդ արվում ե. ֆիզիկայի և քիմիայի մեջ։ Գիտելիքների այդ ասպարիզում, հնարավոր և լինում վերականգնել միայն համապատասխանության տեսնդենց, այսինքն՝ վորոշ յերեսույթների, նշանների և ընդունակությունների մեջ քիչ թե շատ ճիշտ կապ և փոխհարաբերություն։ Այդպես որինակ, վորոշ փոխհարաբերություն գոյություն ունի մարդկանց հասակի և քաշի մեջ, վորոշեան բարձրահասակ մարդիկ ընդհանրապես ավելի ծանր են կարձահասակներից։ Նման փոխհարաբերությունները կոչվում են կորրելացի։ (корреляция)։

Կորրելացիոն կախումը տարրերվում և փունկցիոնել կախումից, վորին վերականգնում ե. որինակ, ֆիզիկան՝ իր ուսումնասիրության յենթակա յերեսույթների մեջ։ Ֆունկցիոնել կախման ժամանակ, յերկու յերեսույթների մեջ յեղած կարող այնպես ե, վոր մի յերեսույթի վորոշ մեծություն (X) համապատասխանում ե մյուս յերեսույթի ճիշտ վորոշված մեծությանը (y)։ Իսկ կորրելացիոն կախման ժամանակ, մի յերեսույթի վորոշ մեծություն (X) համապատասխանում ե մյուս յերեսույթի (y) տասանումների պակամ պակաս նշանակալից թափը (размах)։ Որինակ, չյուսիսային Ամերիկայի Զիկապո քաղաքի համալսարանին կից փորձնական գոլոցի 487 աշ.՝ ունու սեռական հասունության ժամանակը վորոշելու դեպքում, սատացել են հետեալ արդյունքները.՝ սեռական հասունությունը սկսել ե.

5 աշակերտունու	մոտ	10 տարեկան	հասակում
37	»	»	»
112	»	»	»
172	»	»	»
123	»	»	»
29	»	»	»
8	»	»	»
1	»	»	»

Այդ ավալները զրաֆիկայի միջոցով արտահայտվում են հետեալ ձևով.՝



Նկ. 7. Զիկապոի գոլոցի աղջիների սեռական հասունության կոր-ը

Վորքան քիչ և յ-ների տատանումների թափը, վորոնք համապատասխանում են X-ը թի վորոշ նշանակության, այնքան մոտ ե կորրելացիոն կախումը փունկցիոնել կախմանը։ Վորքան այդ թափը մեծ է, այնքան յերեսույթների մեջ յեղած կարող փոքր ե. Այդ կախման աստիճանը պարզաբանելու համար (այսինքն, յերկու յերեսույթների մեջ յեղած կարող աստիճանը) հանում են այսպես կոչված կորրելացիայի կոեֆիցիենտը (փոխհարաբերության աստիճանացույց)։ Նա նշանակում է լատինական բառով։

Կորրելացիայի կոեֆիցիենտի մեծությունը թույլատրում է տատանումներ հետեալ սեռական համանաներում. — + 1 մինչև 0 և -1 ից մինչեւ -1. Կորրելացիայի կոեֆիցիենտը = + 1 այն գեղղում, յերբ ունենք լրիվ գրական համապատասխանություն յերկու

նշանների մեջ, այսինքն, յերբ նրանցից մեկի գոյությունն ուղղեցում է մյուսի ներկայությանը և մեկի մեծացումը անփոփոխ կերպով զուգակցում է մյուսի համապատասխան և պրոպրցեսունել մեծությանը:

Կորրելյացիայի կոեֆիցիենտը = -1-ի, յերբ ունենք լրիվ բացասական կամ հակադարձ փոխարարելությունն, այսինքն, յեթե յերկու նշան փոխադարձաբար բացառում են միմյանց, կամ մեկի մեծացումն անփոփոխ կերպով ուղեկցվում է մյուսի համապատասխան և պրոպրցիոնել փոքրացմանը:

Կորրելյացիայի կոեֆիցիենտը = 0-ի, յերբ մի նշանի ներկայությունը և փոփոխությունը վոչ մի կախում չունի մյուսի ներկայությունից ու փոփոխությունից: Յեթե կորրելյացիայի կոեֆիցիենտը դրական կոտորակ է, ապա ուսումնասիրվող յերկու նշաններն ել գտնվում են վորոշ աստիճանի ուղիղ կախման մեջ, իսկ յեթե բացասական կոտորակ է, ապա նրանք գտնվում են վորոշ աստիճանի հակադիր կախման մեջ:

Այդպես, որինակի, յերեխաների հասակի և քաշի մեջ յեղած կորրելյացիայի կոեֆիցիենտը = + 0,8. դա նշանակում է, վոր վ՞չ - յուրաքանչյուր բարձրահասակ յերեխա կարճահասակ յերեխայից ավել է կշռում. բայց յեթե մենք վերցնենք մանկական մասսան իր ամբողջությամբ, ապա նրա նշանակալից բարձրահասակ յերեխաների մեծամասնությունը, կլինին միաժամանակ և ավելի ծանր քաշով: Խերոնի Լոնդոնի 4000 յերեխայի վրա կատարած զիտողությունները տվել են հետեւյալ արդյունքները. — մի կողմից մտավոր սժավածություն (օդարենոստ) իսկ մյուս կողմից հասակի, քաշի, մննդի, գեղձերի դրության, ատամների, հագուստի մաքրության և վորակի կորրելյացիայի կոեֆիցիենտը = + 0,1. դա նշանակում է, վո՞յ յերեխայի ֆիզիկական դրությունը և նրա կյանքի ընտանիքան պայմաններն անհշան աղփեցություն ունեն նրա մտավոր կարողությունների վրա:

Բացասական կորրելյացիա գոյություն ունի որինակ մի կողմից յերեխայի հասակի և մյուս կողմից՝ ներշնչման յենթակա լինելու, ցավի դյուրազգացության, ուշազրության անկայունության մեջ, վորովհետեւ վորքան վոյք է հասակը, այնքան ուժեղ և ներշնչման յենթակա լինելը, ցավի զգայնականությունը և ուշադրության անհաստատ լինելը:

Ըսդունված և կորրելյացիայի կոեֆիցիենտի հետեւյալ վնասատականը. — յեթե կոեֆիցիենտը 0,15-ից փոքր է, ապա կորրե-

լյացիան «աննշան է»: յեթե նա 0,15-ից - 0,4, ապա կորրելյացիան «նկատելի յե»: յեթե 0,4-ից - 0,6, ապա կորրելյացիան «բարձր ե»:

Կորրելյացիոն մեթոդը խոստանում է մանկաբանության մեջ լինել շատ ողտավետ, քանի վոր նա նպաստում է մանկաբանական կարևոր խնդիրների լուծմանը, այն է, վերականգնել փոխարարելությունը յերեխայի զանազան մորֆոլոգիական, փունկցիոնել և հոգեկան հատկությունների միջև:

Հ Ա. Բ Յ Ե Պ

1) Ի՞նչ նշանակություն ունի ստատիստիկական մեթոդը մանկաբանության մեջ:

2) Մի վորեւ հատկության վերաբերմամբ տվյալ մանկական մասսայի միջին մակարդակը վորոշելու համար վորպես ընդհանուր չափանիշ, ինչն և վերցվում:

3) Ի՞նչ բան և Մոդուլը, Մեդիանան, և Միջին բվաբանականը:

4) Ի՞նչի համար և հարկավոր, ամասսայական թեքումը՝ դուրս բերել:

5) Ի՞նչպես են դուրս բերում միջին քառակուսի թեքումը:

6) Ի՞նչ ձևով են չափում յերեխայի զարգացման աստիճանը քառակուսային միջին թեքման միջոցով:

7) Փոփոխական են արգյուք ստանդարտները:

8) Ի՞նչ բան և անհատական պրոֆիլը:

9) Ի՞նչ բան և կորելյացիոն կախումը:

10) Ի՞նչ նշանակություն ունի կորրելյացիայի կոեֆիցիենտը:

ԽՆԴԻԲՆԵՐ

1) Ա խմբակում կատարվել է յերեխաների արագ և ուղիղ կարդալու փորձեր: Մեկ ըոպեյում յուրաքանչյուր յերեխա պետք է վորքան կարելի յի արագ կարդար բառերը: Բառերն ուղիղ կարդալու հաշվառումը տվել է հետեւյալ արդյունքները՝ կարգով:

1) 85 2) 60 3) 80 4) 29 5) 55 6) 37 7) 58 8) 73 9) 65
10) 47 11) 59 12) 59 13) 50 14) 89 15) 47 16) 53 17) 40 18)
69 19) 51 20) 57 21) 49 22) 33 23) 57.—դուրս ըերեք Ա խըմբակի ընթերցանության ունակությունների միջին բվաբանականը, մեղիանան, միջին թեքումը և սիգման:

ՊԱՏԱՍԽԱՆ

$$M = \frac{1302}{23} = 56,6 : M_e = 57 : \text{սիգման} = 15,1:$$


Սիգման վորոշելու ժամանակ 57-ից փոքր մեծությունները 57-ից հանում ենք, իսկ 57-ից բարձր մեծություններից հանում ենք 57-ը: Այս ժամանակ ստանում ենք անհատական թեքումներ՝ 28, 3, 23, 28, 2, 20, 1, 16, 8, 10, 2, 2, 7, 32, 10, 4, 17, 12, 6, 0, 8, 24, 0:

Յուրաքանչյուրը դրանցից բարձրացնում ենք քառակուսի աստիճանի և ստանում ենք 784, 9, 529, 784, 4, 400, 1, 256, 63, 100, 4, 449, 1024, 100, 16, 289, 144, 36, 0, 64, 576. 0:

Այդ քառակուսիները գումարում ենք և ստանում 5237: Ստացված գումարը բաժանում ենք գումարելիների թվի վրա, այսինքն 32-ի, ստանում ենք 227,74. Վերջին թվից քառակուսի արմատ ենք հանում և ստանում 15,1: Այս այդ կինի միջին բառակուսային թեքում (սիգմա):

2) Վերոհիշյալ ձևով կարդալու ունակությունների համար հանեք ձեր գպրոցի Ա խմբակի միջին բվաբանականը, մեղիանան, միջին թեքումը և սիգման (փորձը պետք է կատարել յուրաքանչյուր աշակերտի հետ առանձին: Կողմանկի մարդկանց և մյուս յերեխաների ներկայությունը ցանկալի չի, վորովհետև նըանք կարող են փորձին յենթակա յերեխայի ուշաղը դժյունը գրավել և իրանց ներկայությամբ շփոթել նըան: Ընթերցանության համար հատկացվում է ճիշտ մեկ ըոպե:

3) Ցածը բերված նկարը պատկերացնում է յերեք ութ տարեկան տղա յերեխաների անհատական պրոֆիլը՝ հինգ նշանի վերաբերյալ, տվեք նրանց ֆիզիկական զարգացման գնահատականը:



Նկ. 8. Յերեք ութ տարեկան յերեխայի հինգ նշանի (քաշ, հասակ, կրծքի ցրծադիմ, թիկունք և գանգ) վերաբերյալ անհատական պրոֆիլ:

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Զանագանավորում (дифференциация) — տարրերության և զանագանության ներկայություն:

Տենդենցիա (тенденция) — մի բանի ձգտելը, հակում տրամադրություն:

Գործառնական կախում (функциональная зависимость) — մի մեծության մի ուրիշ մեծությունից խիստ վորոշված կախվածություն:

Ընթերցանության համար ուսուերեն լեզվով հանձնաբարգում ևն հետեւյալ ձեռնարկները: — Պ. Блонский, М. Ионова, В. Левинский, М. Шейман. — Методика педагогического исследования детей школьного возраста 1927, отдел VII. Методика статистической обработки.

ԱՏ ԼՐ 1178

0025396

2013



